ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Մայիսի 17-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Տիկահիտո Հարադային:

Հանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջեւ համագործակցության առավել սերտացման նպատակով ձեռնարկվող քայլերի համար՝ վստահություն հայտնելով, որ այդ գործակցությունից փոխադարձ դրական արդյունքներ կարձանագրվեն: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Ճապոնիայի ժողովրդին՝ Հայաստանին ցուցաբերվող զորակցության համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ անցյալ տարի ողջ աշխարհը ցնցած ողբերգությանը՝ Ճապոնիայի երկրաշարժին եւ դրա սոսկալի հետեւանքներին: Այս առնչությամբ Ճապոնիայի դեսպանը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ դժվարին այդ օրերին հայ ժողովրդի եւ Հայոց Եկեղեցու սրտակցության, ինչպես նաեւ ի հիշատակ զոհվածների կազմակերպված աղոթքի արարողության համար:

Նորին Սրբությունը մաղթեց, որ Ճապոնիան շուտափույթ հաղթահարի աղետի հետեւանքները եւ ինչպես Ճապոնիայի ժողովուրդը, այնպես էլ ամբողջ աշխարհը զերծ մնան նման ողբերգություններից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՍԵՆԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Մայիսի 26-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Սենատի անդամներ Ֆիլիպ Մարինին, Սոֆի Ժուասենին եւ Բերնար Ֆուրնիեին:

Ողջունելով սենատորների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետը շնորհավորեց նրանց նոր նախագահի ընտրության կապակցությամբ՝ մաղթելով, որ նրա առաքելությունն արդյունավետ ու արգասաբեր լինի ի բարօրություն Ֆրանսիայի ժողովրդի:

Անդրադառնալով երկու երկրների հարաբերություններին՝ Նորին Սրբությունը նշեց, որ հայ ժողովուրդն առանձնակի ջերմություն է տածում ֆրանսիացիների հանդեպ, քանի

Տիկահիտոն Հարաղային Վեհարանում